

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԻ ԶԳՏՈՒՄՆԵՐՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

(Հարունակութիւն),

Նամակն արդէն ցոյց է տալիս՝ որ թշնամի քրիստոնեաներին Վի ածել սիրով և համբուրիւ . . .» (էջ. 48) նոյն իսկ Գրիգոր Գ.ից է արտայայտուել, իբրեւ հետեանք այն խօսակցութեան, որ ունեցաւ Շնորհալին Ալեքս Ա. քսութիւնի հետ: Նոյնք երևում է նաև Մանուէլի առաջին թղթից, որում նա ասում է. «Եւ զբանսն, զոր ի նմանէ և ի ձէնջ յաղագս միաւորութեան մեր և ձեր շարժեցաւ ի միջի ձերում, ընկալաւ թագաւորութիւնս իմ գրով տուեալ առ ի ձէնջ:

«Յայտ առնեմք ձեզ յառաջագոյն խորհել և այց առնել թագաւորութեան մերոյ յաղագս քրիստոնէից Հայոց հաւատոյդ. զոր և ի միտ առեալ զեղեալ բանս ի գիրս բարեպաշտութեան ձերոյ՝ որ թարգմանեալ ցուցաւ. ուրախութիւն եղև Աստուծոյ և մեզ»:

«Ասանորոյ խորհի թագաւորութիւնս մեր՝ իմ լինիլ միջնորդ միաւորութեան բաժանման ձերոյ. քանզի զպատուականութիւն ձեր և զաստուածասէր մտադիւրութիւն և զբարւոյք առաջնորդութիւն ծանեայ ի ձեռն այսր գրոց»¹:

Լաւ նայելով Գրիգոր Գ. ի թղթի վրայ՝ տեսնում ենք որ նա

պաշտպանում է իւր եկեղեցու դաւանական սկզբունքները, բայց և ընդ նմին նա ներողամտութեամբ է վարւում դէպի միւս քրիստոնեաները: Գրեթէ նոյն կերպով է վերաբերւում և Մանուէլ դէպի Հայերը, վասնորոյ նա ևս նկատուեց Հայոց մէջ իբրեւ դաւանակից . . . :

Թղթի բովանդակութեան մասին այլևս նոր ասելիք չունենալով¹, պիտի յիշենք միայն՝ որ այդ գրութիւնը Հիմունք է եղել որին հետեւել են յաջորդ քանի մի կաթողիկոսներն այդ բանակցութեան մէջ ոչ միայն սկզբունքներով և գաղափարներով, այլ և հէնց ոճով և բառացի նմանութիւններով: Գրիգոր Գ. ևս աչքի առաջ է ունեցել խաչիկ կաթողիկոսի նախայիշատակեալ թուղթը: Այս օրինակները զոյց են տալիս թէ ինչքան նշանակութիւն է ունենում ամբողջ սերունդների վրայ և մզան գորութիւն, մի մեծ մարդի վեհալսեմ և անմահ գաղափար, այլ և հեղինակութեան բարձրութիւնն:

Եթէ չմոռանանք, որ ս. Գրիգոր Լուսաւորչի հոգին ամբողջ Հայկական կեանքում տիրապետող վարիչ է եղած, պէտք է նրկատենք և այս, որ Գրիգոր Մագիստրոսի հաւատարիմ աշակերտներն են եղած Պահլաւունիները: Ահա թէ ինչ է գրում նա առ իւր որդի Գրիգոր վկայասէրն և թէ ինչպէս նորա խօսքերը բոլորի մէջ յաճախ արձագանք գտան.

ԱՌ ՎԵՍՏՆ ՎԱՐՉԱՄ ՈՐԴԻՆ ԻԻՐ:

Վարժողական ներտրամադրութիւն մակամտածական բաղդատութեամբ, երկպառիկ ի քէն Հայցէ բանս իրաւացի ինձ վարկանիլ մանուկ դու ևս խելոյ և բարւոք ելոյ:

Արժանապէս բաղկացուցանող, և արծարծող և մակացու ենթակայի արհեստս պիտանացու տածեալ վեհագոյն խոկմանն ի բարիսն մոլորեցուցիչ և ի վառթարագունէն քեցեալ առ ի նմանէ:

¹ Թղթի մէջ կան քանի մի հաւատամքներ, որոնք անշուշտ մեծ ապացոյցներ պիտի դառնային հանգուցեալ Գաթրճեանի ձեռքին, եթէ նա ունեցած լինէր. բայց նորա փոքրիկ գրութեան մասին Հայոց հաւատամքի վրայ՝ յետոյ:

Հպատակ եղեալ ի հօռակիցն կարեաց և յանուսումնութենէ արիական ջանի նահանջեալ. և յատուրիկեցի կրթմունսն, մինչ տակաւին յանախական տիս հասեալ ի տերունեան ճեմարանին զարգանաս:

Բակերտեալ բաբունական եռանձնեան կոչմանն, և հայրենի աւանդութեան պատահեալ բախտի, հօւսք եղ յենթակայէ եղեալ բոլորն և ի կատարմանէ:

Առասանութիւնս պիւթագորեան և պղատոնական, և ըստ ագիրացւոյն՝ իբրու զստինս դիեցեալ մինչ ի տարերս տակաւին տարբերէիր տենչացեալ ըղձայի քեզ արբուցանել անդանգադ:

Մեծագոյն ձիր քան զոսկի և քան զականս և զբոլոր բազկացեալ նիւթ զգա կապտեալ առաքինութեամբ ի մի հաւաքեալ ընձեռեցի քեզ, զաննախանձ և անդուլ ոչ հանգեսոյ երբէք և փոխաբէնս հայցեմ ի քէն՝ զաւանդութիւն մեր ոչ մոռանալ երբէք և զփոյթ սիրոյն առ քրիստոս Աստուած և զլոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել՝ զՊարթևին ասեմ քոյոյ հաւունս:

Արդ՝ այս սկզբունքը վարսուած լինելով այդ հոգեպարար ընտանիքի մէջ, որից իւրաքանչիւրն, ինչպէս տեսնում ենք նոցա թղթերից, այլ և նոցա մթնոլորտում ապրածները՝ միտածէին Հայոց եկեղեցու հաւատարմութեան բովի մէջ, մեզ չպիտի զարմացնէ, եթէ այսօր մի գրութիւն տեսնենք, որում կատարելագոյն կերպով արտայայտուած է նոցա քաղաքականութիւնը:

Բայց դոցա քաղաքականութեան վրայ խօսելով, միշտ պէտք է նկատի ունենանք՝ որ այդ ոչ թէ միայն Յունաց վերաբերմամբ էր, այլ և ուրիշ այն եկեղեցիների, որոնք փոքր ի շատէ շփումն ունէին Հայոց հետ: Դոցա թուում էին մինչև անգամ Ասորի ուղղափառներն ու նեստորականներն, որոնց վրայ առանձին ասելիքներ չունենալով առ այժմ, ուրիշ առիթով հետազոտութեան առարկայ կգառնան, երբ անցնենք Կոմիտաս կաթողիկոսի շրջանը, զի այդ միջոցին, ինչպէս ցոյց են տալիս բնադրււթները, գրագրութիւն են ունեցել նորա հետ հաւատոյ միութեան մասին: Մնում է ուշ դարձնել նաև Հռովմէական եկեղեցուն, որ, ինչպէս նախայիշեալ գրութեանս մէջ ցոյց է տրուած, միջին

դարերում՝ սկսան յարաբերութիւն ճանկել Պաշլաւունեաց՝ այն է Գրիգոր Գ-ի հետ: Ափսոս որ Հռովմայ հայրապետի այդ առաջին թուղթը դեռ մեր ձեռքը չէ հասել. սակայն ունինք նորա երկրորդ թուղթն, որի մէջ յիշատակում է նա իւր բանակցութեան սկզբնաւորութիւնը: Որչափ առիթը ներկայանայ և կարելի լինի պիտի աշխատենք պարզել այդ յարաբերութիւնն, որ այնքան անբախտութեանց պատճառ է եղած Ռուբինեանց ժամանակի պատմութեան մէջ, մանաւանդ որ այսպիսի անբախտութիւն ամենայն անգամ տեղալու է Հայոց գլխին, երբ վերջիններս նիւթականից, ժամանակաւորից, անցականից շլանում են և միմիայն դոցա ասպհովութիւնը խնդրում առանց յետ նայելու, և ամենայն ինչ որ դարաւոր քաղաքակրթութիւնն ու յառաջագիմութիւնն է տուել, զոհում, վճար դարձնում: Բայց այդ անբախտութիւն էր գիտնական տեսակէտից ևս, զի դորանով բացւում էր եզուիթական հոսանքի մի ճանապարհ, որից որչափ էլ փախէին Հայերն, այնու հանգերձ շրշումներն ու ցայտիւնները կդալէին նոցա, երբ Հռովմէական եկեղեցու այդ խաւարաշունչ հեղեղը անցնէր Կիլիկիայի դար ու փոսերով և իւր խոխոմների մէջ արգելքների հանդիպէր: Ով լաւ ուսումնասիրէ Հայոց պատմութիւնն այդ ժամանակից զինի, նա լաւ կտեսնէ, որ ազգի սնունդը հետզհետէ բորբոսնում է և Հայաստանեայց եկեղեցու վարդապետութեան սուրբ սիւնակները մամուռուում և տղմալուում են: Հին հռովմէական պետութեան երկու իրար հակառակ եկեղեցեաց մէջ Հայոց եկեղեցու վարդապետները՝ նայելով աջ ու ձախ, թռցնում են աչքից իւրեանց սրբահիմն ճանապարհի սրբադիր նպատակակէտը:

Ինչ և իցէ . . . : Առ այժմ հետազօտութեան առնենք դեռ Հռովմայ հայրապետի թուղթը: Մէկ հետաքննական կէտ ևս կայ աստ և այդ է՝ տեսնել թէ ինչպիսի ամբարտաւանութեան, ինքնահաւանութեան և հակաւետարանական ինքնահաճութեան հոտ է բուրում այդ թեթեւայայտ թղթից: Պաշլաւունեաց բարոյական արժանեաց փսեմ՝ բարձրութիւնը կարելի է իսկոյն նկատել, համեմատելով այդ գրութիւնը նոցա թղթերի հետ, չնայե-

լով՝ որ երկրորդների մէջ յեղյեղումեն ծանրագին և օրուայ ստիպողական հարցեր, իսկ առաջինը դեռ զօրով է տրամադրւում հարցեր ծնելու: Այստեղ բնորոշ եզրակացութեան խնդիր կայ՝ ըստ այնմ՝ թէ՛ le style s'est l'homme.

Ահա այն թուղթը.

ԹՈՒՂԹ ՈՐ ԲԵՐԱԻ Ի ՀՈՒՄԷ ԱՌ ԳՐԻԳՈՐԻՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ, ՈՐ ՆԱԽ ԷՐ Ի ԹՈՒԱԿԱՆԻՆ ՇՁ:

Ինոկենտիոս եպիսկոպոս ծառայ ծառայից Աստուծոյ՝ սլատուական եղբօր մեր Գրիգորի կաթողիկոսի Հայոց, և ամենայն եպիսկոպոսաց և քահանայից և սարկաւազաց, և ամենայն Հայաստանեաց արանց և կանանց, որք հրամանաւն Աստուծոյ ընդ ձեռամբ ձերով են. Ողջոյն և առաքելական օրհնութիւն:

Լուաք զուղղափառ հաւատս ձեր ի գրոյ, զոր եբեր Աղարի արքեպիսկոպոս Օտոյ, զոր իբրեւ ընթերցաք գոհութեամբ մեծաւ փառս մատուցաք Աստուծոյ, որ զձեզ հաստատուն յուղղափառ հաւատս պահէ յայլազգեաց միջի. նաեւ առաւել ուրախութեամբ գոհացաք զի զհաւատ և զկարգ եկեղեցոյս Հռոմ լիապէս ետես առ ձեզ. քանզի և ամենայն որ որ գիտութիւն ունի սկիզբն հաւատոց և բարեկարգութեան զեկեղեցոյս Հռոմայ պահիցէ՝ զի թէպէտ և ընտրեցան ի Քրիստոսէ Բժ.նքն, սակայն Պետրոս գլուխ և առաջին կարգեցաւ ի նմանէ առաքելոցն. նոյնպէս և այս որ աթոռ է նորին՝ վեհագոյն է ամենեցուն. և փան այնորիկ կոչեցաւ Կեփիսաս՝ զի հիմն և գլուխ է ամենայն հաւատոց, և այս սուրբ և առաքելական եկեղեցիս մայր է ամենայն եկեղեցեաց Աստուծոյ. և հաստատեալ է ուղղափառ հաւատով յառաքելոյն Պետրոսէ, որեւ անշարժ և անխախտելի մնաց եկեղեցիս Հռոմայ մինչև ցայսօր. և հերձուած ոչ եմուտ

1 Երևի Երուսաղէմի եկեղեցին ևս, որ մայր ամենայն եկեղեցեաց էր համարւում առաքելոց ժամանակից սկսեալ, ամենքի ստորագրեալը պիտի լինի, վասն զի նորա առաջին հայրապետն էր Յակոբ, իսկ Յակոբ երբայեցերէն նշանակուած է գարշապար:...

յեկեղեցիս յայս իշխանութեամբ և ոչ մոլորումն յառաքելական ճանապարհէն, այլ է ըստ որում և խոստացաւ տէր մեր Յիսուս Քրիստոս գլխաւորի առաքելոյն Պետրոսի. «Սիմոն, ահա Լաւսիկ ինդրեցաւ սատանայ խարբալել զձեզ իբրեւ զցորեան, այլ ես ապաւնցից զհայր վասն քո զի մի պակասեսցին հաւատք քո: Եւ որքան զարձցիս և հաստատեսցես զեղբարս քո: Եւ որքան հրաման աստուածային անշարժ հաստատութեամբ մնաց ի վերայ այսր եկեղեցոյ, և ի սմանէ հաստատի մե՛ծ, ան ազգաց եկեղեցեաց շարժումն և թերութիւն, և հանապազ եկեղեցիս այս Քրիստոսի մանկազանն հնձէ զամենայն որոմն և զփուշ, և պատրաստէ հոյն յաւիտենականի: Եւ վասն զի եկեղեցւոյս Հռոմայ սովաւ պարգեւ ի Քրիստոսէ հաստատել զամենայն խախտեալ եկեղեցիս, մոլորեալ են որոշեալքն ի սմանէ, որք ոչ գան զկնի ի վարդապետութեան սորա, քանզի որպէս մարմին հնազանդի գլխոյ՝ նոյնպէս և ընդհանուր եկեղեցի, որ է տաճար Քրիստոսի, հնազանդել պարտի սմա, որ գլուխ եկեղեցոյ հաստատեցաւ ի Քրիստոսէ: Եւ զսոյն գրեաց սուրբ և մեծ եպիսկոպոսն Միլանայ Ամբրոսիոս՝ և երեւցոյց թէ ամենեքեան իրաւացի է զի հնազանդ լինին կարգաց եկեղեցոյս Հռոմայ, և այդ աղագաւ հարկ եղև մեզ զայս յիշատակել, քանզի լուաք եթէ որ Հայոց եկեղեցիդ ի Քրիստոսի տնօրէնութեան խորհրդոյն պատարագն ի ս. մարմին և արիւնն ընդ գինւոյն ջուր ոչ խառնէք, և քանզի ամենայն հաւատացելոց փրկութիւն հոգւոց և մարմնոց Քրիստոսի պատարագին խորհուրդն է. վշտանամք յորժամ ոչ տեսանեմք զորդիսդ յայսմ հօրս ընթացակիցս եղեալ, որպէս հայր, յորժամ տեսանէ զորդի ի կամաց իւրոց անհնազանդ՝ և խրատէ զգաստանալ և դառնալ՝ նոյնպէս և եկեղեցիս Հռոմայ՝ հայրական գթով տրտմեալ ընդ այս՝ և ազալէ զձեզ զգաստանալ, զի եթէ էք ի հնազանդութիւն առաքելական եկեղեցւոյս՝ պարտիք հրամանաց և սովորութեան որ է ի սմա հետեիլ:

Այլ և պարտ է ձեզ հայել ի մե՛ծ, ան ազգս քրիստոնէից, զի ամենեքեան ի ս. խորհուրդն ջուր արկանեն, և զկարգ և զօրէնագրութիւն կաթողիկէ եկեղեցւոյս ըստ այսմ պահեն: Արդ

եթէ և դուք որպէս և գրեալ էք, հնազանդ էք այսմ աթոռոյ՝ պարտիք և զայս ուղղել զհետ մերում կարգիս, քանզի վասն այսր խորհրդոյ ս. Աղեքսանդրոս հայրապետն Հռոմայ՝ որ Ե. երորդ էր ի ս. Պետրոսէ՝ այսպէս գրեաց. «պարտ է, ասէ, ամենայն քահանայապետի զխորհրդական գործ եկեղեցւոյ սուսուցանել, այսինքն՝ զմկրտութիւն, զպսակ, և զպատարագ որ է խորհրդական չարչարանացն Քրիստոսի յիշատակ, զի որպէս Քրիստոս պատարագեցաւ ի խաչին մարմնով՝ և արիւն և ջուր ել ի կողէն, զնոյն խորհրդոյ յիշատակ պարտիմք կատարել և մարմին և արիւն և ջուր պատարագել»։ Զայս հրամայեաց ս. Աղեքսանդրոս՝ մեծն և փառաւորեալ վկայն, որ զամենայն կանոնս և զհաստատութիւն լիապէս ունէր ի ս. Պետրոսէ՝ և եցոյց եթէ արժան է ոչ արեամբ միայն պատարագել՝ և ոչ ջրով միայն՝ այլ մարմնով, արեամբ՝ և ջրով, քանզի զսոյն լուաք և ուսաք ի ս. աւետարանէն, զի յորժամ խոցեցին զկողն տեառն՝ ոչ ջուր միայն ել և կամ արիւն միայն, այլ արիւն և ջուր։ Նաև միւս հայրապետն ս. Յուլիոս՝ այսպէս ասէ, ոչ է պարտ բաժակին լինել արեամբ միայն և ոչ ջրով միայն, այլ երկոքումբքս, այսինքն արեամբ և ջրով։ Եւ զարձեալ գրէ ս. Յուլիոս՝ «եթէ ոք զխորհրդական նշանքսն միով կատարէ առանց միւսոյն՝ զազարել պարտի մինչև ի զջրումն եկեսցէ և ապաշխարեսցէ ըստ եկեղեցւոյ կանոնագրութեանց»։ Եւ Կիպրիանոս մեծ վկայն և եպիսկոպոս Կարբեդոնոյ, որ յարեմուտս յիշատակ վասն բաժակի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի այսպէս խօսեցաւ Հոգին սուրբ բերանովն Սողոմոնի և ասաց. «Իմաստութիւն շինեաց իւր տուն և կանգնեաց սիւնս եօթն. զեն զգեցելիս իւր և խառնեաց ի խառնելիս զգինի իւր, և պատրաստեաց զսեղան իւր, և առաքեաց զճառար իւր կոչել բարձր քարոզութեամբ և ասէ, որ ոք իցէ անզգամ եկեսցէ առ իս՝ և ցականսամիտսն ասէ՝ եկայք կերայք ի հացէ իմմէ և արբէք զգինի զոր խառնեցի ձեզ»։ Այս մարգարէութիւն Սողոմոնի նշանեաց զփրկական խորհուրդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խառնեաց ի խաչին և ետ ի հաւատացելոցս զնոյն։ Եւ այսու ցուցանէ երանելիս Կիպրիանոս՝ թէ ոչ է օրէն ջրով միայն ա-

ւանդել զխորհուրդն՝ և ոչ արեամբ լուիով՝ այլ տրեամբ և ջրով։
 Այսպիսի սրբոց հարցս վկայութեանց երեւի՝ թէ որ աւանդէ
 զխորհուրդ տէրունական գինով միայն՝ բաժանի ի հաւատացելոց
 Քրիստոսի ժողովոյ, և որ ջրով միայն՝ առանց Քրիստոսի է հա-
 մարեալ խորհրդոյն կատարումն. քանզի և խառնումն բանին
 Աստուծոյ ընդ մեզ այսու երեւի՝ զի խառնումն արգարեւ եղև
 աստուածութեան ընդ մեզ, որոյ և եղաք անդամք և կոչեցաւ
 նա մեզ գլուխ. և ըստ այսմ զխորհուրդ խաչին ի վերայ սրբ-
 օց սեղանոյն կատարեալ առնումք հաւատացեալքս և խառնիմք
 ընդ Քրիստոս, որպէս և գրեաց երանելին Ամբրոսիոս։ Դար-
 ձեալ, որպէս յիշեցուցաք ձեզ վկայութեամբ ս. հայրապետացն՝
 վասն խառնման արեանն և ջրոյն, որ ի խաչին ցուցան, ծա-
 նուցանեմք և վասն տօնի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
 տոսի, որպէս գրեցին ս. հարքն առաջինք և զայս՝ ուսեալք ի
 ս. առաքելոցն և հասուցին մինչև առ մեզ, քանզի լուաք թէ
 դուք ազգդ Հայոց՝ ոչ տօնէք զտօն ծննդեանն Քրիստոսի զկնի
 մետասան ազգաց, և պարտ է ձեզ յիշեցուցանել մեզ եթէ զի՞նչ
 պատճառաւ զատեալ որոշիք ի մետասան ազգացս. քանզի երա-
 նելի հայրապետն Յովհաննէս Ոսկերեբանն ի ճառ ծննդեանն գրէ
 թէ այսօր ծնաւ Քրիստոս, երևեցուցեալ զտօն ծննդեանն որիշ
 և զտօն մկրտութեան՝ յայլ օր։ Վկայէ և տօն ի ծննդեանն Տեա-
 ռն՝ արեգականն շրջագայութիւն, քանզի յամսեանն յորում
 օր ծննդեանն է դարձ արեգականն է, տիւն սկսանի յաճել և
 գիշերն ի պակասել, իսկ ի ծննդեանն Յովաննու որ զ. ամսով
 յառաջէ Քրիստոսին, սկիզբն առնուն աւուրքն ի նուազիլ՝ և գի-
 շերն ի յաճել. վասն զի և Յովհաննէս քարոզէր ժողովրդեանն,
 նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ և զնորս գրեաց երանե-
 լին Յովհաննէս Ոսկերեբանն՝ ի ճառին, յորում մէկնէ զյղութիւն
 եղիսաբէթի մօրն Յովհաննու և ասէ եղեալ զնոյնն Սեպտ-
 իգն, յորում ամսեան հաւասարի տիւն և գիշերն, և տիւն
 սկսանի պակասել և գիշերն յաճել։ Արդ վասն տօնի ծննդեանն
 Քրիստոսի բաւական համարիմք այսբան զվկայութիւնքս, զորս ի
 ս. Գրոց ածաք ձեզ։ (!) Եւ երկրորդեմք դարձեալ և ծանուցանեմք

ձեր ս. եղբայրութեանդ՝ եթէ ամենեին արժան է ի ս. խորհուրդ պաաարագին Քրիստոսի զջուրն խառնել, այլ և աղաչեմք լսել մեզ և յայս խորհուրդ հաւասարել մեզ, որով և յայտնի ձեր սէրդ և միաբանութիւնդ ընդ ս. եկեղեցիս և ընդ մեզ, քանզի թէ կաթողիկէ եկեղեցիս այս մայր է ձեզ և գլուխ՝ արժան է կամաց մօրս հաւանել և առնել, և կամք սորա այս են ի տօն ծննդեանն և ի խորհուրդ պատարագին ընթացակից լինել իւր՝ և ոչ ի մայրենի ճանապարհէ ստերիւրել, և ոչ ի գլխոյ աստի անդամոց օտարանալ, և զայս ի սոյնս աւարտեցաք:

Դարձեալ յիշեցուցանեմք ձեզ և աղաչեմք զի բնակելով ի սահմանս հեթանոսաց՝ պարտիք լուսաւոր երեւիլ ի մէջ դոցա, և տալ լոյս գիտութեան խաւարելոցդ, որպէս արեգակն և լուսին և աստեղք, որք պայծառացուցանեն զնսեմութիւն երկնի և երկրի, վասն զի եթէ բնակի ս. այր և ուղղափառ ի հաւասարապատիւ սրբոցն միջի և ուղղափառաց, անյայտ մնայ նորին բարի վարքն գոխասանողաց, այլ մեծարի և գովի այն, որ խաւարելոց միջի զնշոյլ վարուց իւրոց և հաւատոց փայլեցուցանէ: Ջնոյնս պատմէր և երանելին Յովբ, եթէ եղբայր եղէ վիշապաց և ընկեր ջայլեմանց: Գովի Ղուլտ ի ս. առաքելոյն Պետրոսէ և յամենայն սրբոց, որ բնակեալ գոլով ի մէջ սոգոմայեցւոցն և հաճոյացաւ Աստուծոյ, զոր վասն բարեգործութեան իւրոյ՝ հրեշտակքն առաքեալք հանին ի կործանմանէն: Այլ և խօսեցաւ Հոգին սուրբ Յոհաննու՝ ճանաչեմ՝ զքեզ, թէ ուր իցես յաթոռն սատանայի նստեալ, և ունիս զանուն իմ և ոչ ուրացար զիս: Եւ Սողոմոն յիշատակէ յերգ երգոցն զգովութիւն փեսային, զոր տայ հարսինն որ է եկեղեցի և ասէ՝ որպէս շուշան ի մէջ փշոց՝ այնպէս մերձաւորդ իմ ի մէջ դստերաց:

Այլ եղբայրս մեր Աղպրի ոչ կարաց զբովանդակն պատմել վասն կենաց ձեր և քաղաքավարութեան, և յաղագս այլ քրիստոնէիցդ որք են յարեւելս և ցանկամք լսել ի ճշմարիտ և ի ս. մարդկանէ՝ վասն այսր և խնդրեմք յԱստուծոյ և ի ձեր սրբութենէդ՝ զաստուածահաճոյ ս. եպիսկոպոսդ զհարազատ եղբայր ձեր զՆերսէս և թարգման ճարտար՝ հմուտ Հայոց լեզուի և

լատինացւոց պատշաճ համարել և յղել ի ս. տեղիս յայս, զոր ամենայն յօժարութեամբ ցանկամբ տեսանել և ընուլ նուրաւ զփափաք սրտի մերում և ահա սպասեմք պատասխանատութեան և ներսէսի եպիսկոպոսի եղբօր ձեր տեսութեան, ապա թէ փասն ճանապարհիդ երկայնութեան երկնչիք, զայլ ոք ի գիտնականաց ձերոց կղերիկոսաց առաքեցէք և թարգման, և օրհնութիւն չօր և որդւոյ նորա Զիսուսի Քրիստոսի և Հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ ի Հռոմ ի լատրանն նախ քան զեօթն կաղանդաց Հսկտեմբեր ամսոյ:

Ընթերցողն արգէն տեսնում է թէ ինչ կերպ է խօսում Հռովմայ պապը. Նամակից երևում է՝ որ Գրիգոր Գ. պատասխանել է նորան և այս թուղթն երկրորդն է Հռովմայ կողմից, միայն թէ այն պատասխանի մէջ Գրիգոր Գ. պաշտպանել է իւր եկեղեցւու զղափառութիւնն, ինչպէս պէտք էր սպասել: Իննոկենտիոս Բ. (1130—1143) իւր թղթի մէջ հէնց սկզբում ճշմարտախօսութիւնից շեղւում է, ասելով՝ որ Հայոց եկեղեցին «զհաւատ և զկարգ եկեղեցոյս Հռովմայ» ունի և ապա յիշելով շատ էական կէտեր, որոնցում Հայոց եկեղեցին պարզապէս տարբերւում է: Այս նրկատմամբ աւելորդ է մեզ երկարաբանել, բաւական է յիշատակել՝ որ Հռոմայ գահակալները միշտ հռչակուել են իւրեանց երկաբանութիւններով և խաբէութիւններով, իսկ այդ արգէն ընդունուած ճշմարտութիւն է եւրոպական գիտնականների մէջ: Անշուշտ Իննոկենտիոս կարծում էր՝ թէ Գրիգոր Գ. չէր ճանաչում Հռովմայ եկեղեցին, ուստի և խիստ գովասանում է առանց գոյզն ինչ քաշուելու: Նա, ինչպէս այժմ ևս հռովմէական սխուստիկների սովորութիւնն է, նոյն իսկ Պետրոսին անուանարկող գէպքերը բռնազրօսում է նորան փառաբանելու համար: Քրիստո-

1 Տես. զորօր. Baxmann Die Politik der Päpste von Gregor I bis auf Gregor VII. մասն I. էջ. 251, որտեղ Հռովմայ հայրապետների անխղճութիւնն աւերկալեցւութիւնն առանձնապէս շեշտում է: Սակաւ չեն եղել գէպքեր, երբ այդ պապերը թուղթ գրել ուղարկել են և ապա ուրիշ խմբագրութիւն իրրեւ պատճեն թողել:

սի այն խօսքերն, որոնք վշտալի գոյն են տալիս այդ առաքեալին, այս թղթի մէջ շրջւում են ի նպաստ: Աւելորդ է այստեղ մի առ մի թուել այն ստույգութիւնք՝ որոնք հիմն են ծառայում թղթի ստաբանական ոճին. մինչև անգամ 11 ազգաց եկեղեցիներ են նկատուում իբր համաձայն Հռովմայ, մինչդեռ մէկն ևս չկայ ապացոյց: Նա շոյում է իւր ինքնահաճութիւնն՝ իւր եկեղեցին մայր եկեղեցեաց նկատելով, առանց որ և իցէ տրամաբանական հետեւութեան կամ հիմնաբանութեան, և երբ այդքիկ պակասում են՝ միակ զէնքը մնում է իմաստակ սխոլաստիկութիւնը:

Թղթի վերջին պարպերութիւնը յայտնապէս ցոյց է տալիս որ Հռովմ նոր է ձգտել ճանաչելու Հայոց եկեղեցին, ուստի և չէ շատանում իւր պատուիրակի պատմաճշնրոյ, այլ խնդրում է ուղարկել իւր մօտ Ներսէս Շնորհալուն, որպէս զի նորանից տեղեկութիւններ ստանայ, մանաւանդ որ վերև արդէն ոիրոյ և միաբանութեան հարեանցի առաջարկութիւն է անում: Հռովմայ այս ձգտմանց շարժառիթներն առաւել ևս կպարզուին, երբ ի նկատի ունենանք, որ Իննսկենտիոս Բ. հակաթոռ էր, թէև օրինաւորն է ճանաչում և դորան հակառակ էր Անակլետ Բ. († 1138) ընտրուած կարտինալների մեծամասնութիւնից: Իննսկենտիոս 4 յաղթում է Ֆրանսիայի օգնութեամբ:

Արդ, քանի որ այս թուղթը գրուած է 1131 թուին՝ ակնյայտնի է, որ Հռովմն է առաջին անգամ միաբանութեան ձգտել՝ Պալհառունեաց բանակցութիւնն որոնելով, և ապա Մանուէլ գրեթէ նման կերպով մասնաւոր պատուիրակի միջոցով: Միաբանութեան այդ շարժումն ընդհանուր էր, վասն զի Բիւզանդ բանակցութիւն ունէր նաև Հռովմայ հետ . . . :

Սորանից յետ այլ ևս նամակագրութիւն չէ յիշում, իսկ ինչ որ պատմիչներն են աւանդում՝ կգտնեն ընթերցողը գրուածքիս մէջ: Առաւել ևս յառաջ գնալով՝ ունինք մի թուղթ ևս առ Գրիգոր Դ. Տղայ, որ թէև Սխուանի մէջ հրատարակուած է, ոսկոյն

1. Նորա ժամանակ նշանաւոր էր Արնոլդ Բրեսչիայի կղերականն, որ անվնհերութեամբ քարոզում էր Հռովմայ աշխարհական ձգտումների դէմ:

զի վերջինս հաւատարիմ աւանդուած լինելու ճշգութեան կնիքը կորցրած է մեր առաջ, հրատարակում ենք վերստին՝ Ս. Էջմիածնի մատենադարանի մի ուղղագիր գրչագրից վերցնելով: Նամակագիրն առիթ է առնում խաչակրաց պատերազմներն և խնդրում է որ Գրիգոր Դ. նպաստաւոր լինի և օգնական: Թուղթը գրում է կղեմէս Գ. 1189 թուին:

Թուղթ հայրապետին Հռոմայ, զոր գրեաց ընդ զօրսն և ընդ թագաւորսն, որք եկին յայսկոյս ծովու փրկել զսուրբ քաղաքն Երուսաղէմ՝ յետ երկց ամաց գերութեան առ կաթուղիկոսն Գրիգոր Տղայ:

Կղեմէս եպիսկոպոս ծառայ ծառայիցն Աստուծոյ, Պատուական եղբօր մեր Գրիգորի Կաթուղիկոսի ամենայն Հայոց: Ողջ՛յն և առաքելական օրհնութիւն:

Խրատն զոր յԱստուծոյ արգար դատաստանէն աշխարհդ արեւելից ի ժամանակս մեր ընկալաւ: Հաւատամք զի առաւել ցաւէ ի սրտի քում մերձաւոր գոյով սրբոյ ¹ երկրին և ունկնդիր վշտին և չարչարանացն զոր կրեն, քանզի ես՝ ողորմութեամբն Աստուծոյ ի հաւատ կաթուղիկէ հաստատեալ, վասն այսորիկ ոչ կարես հանդուրժել՝ այլ արտասուօք զգաս զանարգութիւն քրիստոնէից, նաև այք են որք զանուն քրիստոնէութեան ունին քրիստոնեայք են, և հանդուրժել կարեն յայդքան անարգութիւն սրբոյ երկրիդ, որպէս տեսանի դայ՝ ² այժմ՝ անօրինաց ³ գարշ և զազիր պղղծութեամբ աղտեղեալ, և որ ի նմա սրբութիւնքն՝ որպէս զաղբ անարգ և պիղծ ի նոցին ոտիցն կոխան տուեալ՝ հաւատացեալքն Քրիստոսի սպանեալք և նոցին սրովն ջնջեալք: Զոր և մեք առանց սպառիկ ցաւոյ սրտից մերոց ոչ կարեմք բերել: Նա ևս զի ուժգնանայ չսրբութիւն ամբարտաւանիցն՝ մինչ զի զպատիւ խաչին փութան բառնալ յաշխարհէ, և զփոքր ճաճանչ քրիստոնէից, որ մնացեալ են յայդմ յաշխարհի, ջանան շիջուցանել և ամենեւին յոյինչ դարձուցանել ⁴: Ո՛հ ահա դառն նենգաւորքս ⁵ մեր՝ յորս

1. Սխառան էջ. 467. չունի. 2. 5. Անդ՝ չկան. 4. Անդ՝ կէտեր են այս պարբերութեան տեղ. 5. Անդ՝ աւուրբս:

ս. երկիրն Երուսաղէմի կորեաւ, հաւատացեալքն սպանան, սրբութիւն կոխան եղև, և սր ասացեալ է նախ ողբ մարգարէութեան՝ առ մեզ լցաւ. «Աստուած մատնեաց հեթանոսաց ի ժառանգութիւն, պղծել զտաճար սուրբ քո» : Արդ այս ամենայն ձեզ յայտնի է, և առանց ստութեան գիտէք վասն մերձաւորութեան գաւառիդ, այլ և մեք փութացեալ վաղվաղակի զսոյն յունկն հաւատացելոց խօսեցաք, որք պատրաստեցան արիութեամբ և գան յօգնականութիւն այդմ՝ աշխարհի, անձամբ և ընչիւք և զինուք դէմ եղեալ՝ գան համբերել չարչարանաց վասն նորա, որ ի յայդրմ ս. երկիրդ ծնաւ՝ և բազում անարգութեան համբերեաց, և ի կատարումնն ի նշաւակ խայտառակութեան խաչին զմեզս մեր եթող՝ և յանմահ մահուանէն զմեզ ազատեաց : Առ որ և յուսամք եթէ խրատելովն ուղղէ և դարձեալ մխիթարէ. և այսու ճանաչին իւրքն զանարգութիւն Քրիստոսի յինքեանս բերելով՝ յոր և ական ունիմք եթէ ոչ է առանց հաշտութեան բարկացեալ իւրոյ՝ 1 Ժողովրդեանս, վասն զի ի բարկութեան՝ յիշէ զողորմութիւն, և զկնի լալով երթալոյն խնդութեամբ դարձուցանէ :

Արդ որպէս եդ զքեզ 2 Աստուած անտես, և հաւատաց ի քեզ զտգէտ Ժողովուրդդ, և զքեզ եդ ճշմարիտ լոյս զի տայցես լոյս այդմ՝ աշխարհացդ, վերակացու լեր այդմ՝ գառն և անձուկ պատահմանդ և օգնական. և օրստօրէ զառ ի քեզ հաւատացեալ Ժողովուրդդ քաջալերեաւ և զօրացն, զի տեսեալ զքեզ յայս փոյթ ամենայն Ժողովք 3 Հայաստանեաց որք ընդ քեւ են, փութացեալ պատրաստեցին գալ յօգնականութիւն ս. տեղեացն, որք զինուք, որք ընչիւք, որք անձամբ ի ս. երկրին զիմեսցին յազատութիւն, զի զամբարտաւան ազգն անօրինաց ի պատերազմ իւրեանց յաղթահարեսցեն, և դոցա ի միաբանութիւն մարտակցութեան որ առ քեզ են, և արեւմտական զօրք յայսմ՝ աշխարհէ Աստուծով փութացեալ գան՝ որպէս զի Ժառանգութիւն Աստուծոյ ազատեսցի, և նոցա պղծութիւն առ ոտս կոխան լիցի՝ որոց տուաւ այժմ՝ զանիծեալ բերանս ձգեալ և զԱստուած հայհոյել : 4

1. 'Նոյն' չունի. 2. 'Նոյն' չունի. 3. Անդ՝ Ժողովուրդդ. 4. Անդ՝ վերջին երկու տողերի տեղ՝ կէտեր :

Արդ մեք որ յաջորդ¹ եմք Քրիստոսի՝ ամենայն բարեգործաց մեղաց թողութիւն տալ, գիտասցուք յԱստուծոյ տուեալ զայս պատճառ ամենայն քրիստոնէից մեղաց ապաշխարութիւն, վասն որոյ և որք նուիրեն յայս մրցումն՝ զանձանց չարչարանս կամ՝ զընչից ծախս, յուսամք յողորմութիւն Աստուծոյ և ի սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի շնորհքն՝ թէ ի պատերազմն մեռանին՝ և թէ մնան կենդանի և զխոստումն իւրեանց կատարեն, զի ամենայն մեղաց որոց խոստովանեալ են՝ զթողութիւն առցեն, նոյնպէս թէ և ի ձեր սահմանաց կամ յայլ գաւառաց ընչիւք օգնութիւն առնեն ս. երկրին՝ թողութիւն առնեմք որպէս Աստուած սրտից իւրեանց ետ կամք առատութեան, և որպէս արժէ ծախք տրիցն: Եւ տես զայս զգուշութեամբ, պատուական եղբայր, որպէս Աստուած զքեզ ողորմութեամբն իւրով լուսաւորեալ է, զի անձամբ քո և ժողովրդեամբդ, որք յաշխարհդ արեւելից ի քէնհոյութիւն, ի ս. տեղեացն յազատութիւն յօժարասցիս գնալ, և որպէս կատարի կամք քո՝ և Աստուծով այս խորհուրդս յաջողի փութացիր գրով քո մեզ յայտնել: Եւ այս յայտնի լիցի քեզ՝ զի թէպէտ և մերս մարմնոյ աչաց տեսութենէ բացակայ ես՝ հոգւոյ աջօք հանապազ զքեզ տեսանեմք՝ և ոյջագուրեմք սրտով և սիրով. և զխնդրուածս զոր կամիս հեշտութեամբ կատարեմք:

Գրեցաւ ի Հռոմ՝ ի լատրանն՝ նախ քան զչորս կաղանդաց յունիս ամսոյ՝ և յերկու ամն եպիսկոպոսութեան մերոյ²:

Եւ այս ընդ առաջնոյս բերաւ.

Կղեմէս եպիսկոպոս ծառայ ծառայից Աստուծոյ, Գրիգորի կաթողիկոսի Հայոց. Ողջոյն և առաքելական օրհնութիւն: Հաւատամք եթէ անմոռաց ունիս ի մտի, զի Լուսիոս³ պապն՝ որոյ յիշատակն երանութեամբ, որ նախ էր քան զմեզ, ըստ խնդրոյ ձեր առաքեաց գիրք զկարգաւորութիւն եկեղեցւոյս Հռոմայ. և

1. Հ. Ալիշան փափաքում է անդ՝ որ Լամբրոնեցին սխալ թարգմանէր և «յաջորդի» տեղ՝ «փոխանորդ» անուանէր Հռոմայ եպիսկոպոսին. 2. Անդ՝ պակասում է թուականը, տարբեր են և քանի մի կէտադրութիւն և այլն. 3. Անդ՝ զԼուսիոս:

վասն այսր աւելորդ համարեցաք զմիւռոնն որ ի մէնջ օրհնի ձեր պատուականութեանդ առաքել, այլ յօժարութեամբ զքեզ որպէս զճշմարիտ քրիստոնեայ¹ պատուեմք, և զձեր խնդրուածսն լսեմք: Գրեցաւ ի Հռոմ ի լատրանն՝ նախ քան զԴ.ն կաղանդաց յունիս ամսոյ և յԲ. ամն եպիսկոպոսութեան մերոյ²:

Կղեմէսի առաջին թուղթը պարզ խնդիր է՝ օգնելու խաչակիրներին: Նա ճանաչում է և յիշում Հայոց կաթողիկոսի բարձր նշանակութիւնը, խոստովանում է նորա ուղղափառութիւնը, վասնորոյ և հաւատացած է որ իւր խնդիրը չի մերժուիլ և Գրիգոր Տղայ կհրամայէ իւր հնազանդ հոտին գնալու և ս. երկիրն ազատելու: Կղեմէս չէ կարենում սակայն իւր հռովմէական սկզբունքների արտայայտելու առիթը կորցնել, ուստի և իսկոյն յիշում է որ ինքն ևս իբրեւ քահանայական իրաւունք ունեցող իւր կողմից ևս կարեւոր է համարում, թերեւս Հայոց հաճոյանալու համար, թողնել պատերազմի գնացողաց մեղքերը միայն թէ «որոց խոստովանեալ են»³. մի վարդապետութիւն՝ որ Հայաստանեայց եկեղեցուն խորթ է, զի վերջինս անպայման չէ հրամայում մեղքեր խոստովանելու, այլ այդ թողնում է իւրաքանչիւրի խելքին, որովհետեւ առանց սրտանց զլջալու՝ խոստովանութիւնը միտք չունի իսկ զլջալով կարելի է թողութիւն առանց այն էլ ունենալ, եթէ առանձին ներքին պահանջ չէ զգացւում: Բայց աւելին կայ. Կղեմէս Հռովմայ հայրապետն ասում է, որ նիւթականապէս օգնողներին ևս մեղայ թողութիւն է տալիս, բայց ի՞նչպէս. «որպէս արժէ ծախք տրիցն»⁴: Եւ ահա եկեղեցու պաշտօնեան, որ զինքն «յաջորդ Քրիստոսի» է կոչում, իսկ սկզբում «ծառայ ծառայիցն Աստուծոյ», փերեզակութիւն է անում, եկեղեցին վաշխառութեան միջոց դարձնելով: Բայց ընթերցողին անշուշտ յայտնի է որ մի ժամանակ Հռովմէական եկեղեցին ուղղակի և բացերես թողութեան թղթերի վաճառման պանդոկ էր դարձել. այժմ ևս այդ շարունակում է և մենք տեսնում ենք

1. Անդ՝ «ճշմարիտ քրիստոնիայ» է գարձել: 2. Անդ՝ չիք թուականը:

որ ի հնուց այդ սկզբունքը գործադրուում էր աւետարանին ի նախատինք և ուրիշ եկեղեցիներ թգէտ եկեղեցականներին ի վարակումն: Այդ թուղթը ցոյց է տալիս թէ ինչպէս էին վատ օրինակն ընդհանրացնում:

Նոյն թուղթը ուղարկուած էր և առ Ղևոն, ինչպէս վկայուած է ապա. «Առ պետոս մեր Ղևոն, որ ի սոյն ժամանակս էր իշխան Կիլիկիոյ և Սօրիոյ և լերանց սոցին:

«Կղեմէս եպիսկոպոս ծառայ ծառայից Աստուծոյ, մեր սիրեցեալ որդւոյ մեծապատիւ իշխանի Ղևոնի լեռնցոյ. Ողջոյն և առաքելական օրհնութիւն: Խրատան զոր յԱստուծոյ արդար դատաստանէն աշխարհդ արեւելից» . . . Որից յետոյ նկատուում է. «Նոյն է և այս թղթի բանքն անթերի և անյաւել, որպէս որ յառաջ նոյն առ կաթողիկոսն սուրբ, զոր աւելորդ համարեցաք գրել կրկին»:

Երկրորդ փոքրիկ նամակը գրուած է մի և նոյն ժամանակ և ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս, միաժամանակ բերուած: Բայց Լուսիոս Գ. գահակալել է 1181—1185. յետոյ Ուրբան Գ. 1185—1187. ապա Գրիգոր Բ. 1187. և այնուհետև Կղեմէս, ուստի կասկածելի է թէ ինչն էր ստիպում վերջինիս յիշելու Լուսիոսի առաքումը և ինչու առանձին նամակով է այդ հաղորդում: Նամակի մէջ «և վասն այսր աւելորդ համարեցաք զմիւսոնն որ ի մէնջ օրհնի ձեր պատուականութեանդ առաքել», անտեղի և անկապ խօսքեր են, որոնց Հռովմէական նպատակի են թագրութեան պէտք չկայ: Սակայն այդ ամբողջ թղթագրութեան նպատակի նոր ի նորոյ սկզբնաւորութիւնն երևում է հէնց վերջին խօսքերից թէ «այլ յօժարութեամբ զքեզ որպէս զճշմարիտ քրիստոնեայ պատուեմք» . . . «խօսքեր, որոնք պիտի սէր ճանկէին ճիշդ այնպէս, ինչպէս Իննոկենտիոս Գ.ի թղթի մէջ: Ասել է թէ՝ Հռովմայ պապերի սիրային ձգտումներն դէպի Հայոց կաթողիկոսը չէին հասնում նպատակի . . . »:

Այս նամակի հանգամանաց լրացումն է մի յիշատակագրութիւն, որ Ներսէս Լամբրոնեցուն է պատկանում և ցոյց է տալիս թէ Հայոց ուշագրութիւնը գրուում էր այդ ժամանակ Ալա-

մանաց (գերմանաց) կայսրն, « փրկիչն աշխարհացս: Նորան են
հանդէպ ելնում Հայոց իշխանն ու կաթողիկոսն իւրեանց հե-
տևորդներով և նոցանից են օգնութիւն, թագ խնդրում, որպէս
և ստացան Հապա:

(Կը շարունակուի):

Ա. ՏԵՐ.ՄԻՔԵԼԵԱՆ.